ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2023 թվականի №___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №523-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) ԷԲՑ կանոնների 18-րդ կետի 1-ին ենթակետում «ֆորս մաժորի» բառերից առաջ լրացնել «չի գտնվում» բառերը,

2) ԷԲՑ կանոնների 69-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև նույն օրվա ժամը 13:00-ը, հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա համար, իսկ եթե դրան հաջորդող օրերը ոչ աշխատանքային օրեր են, նաև այդ օրերի և դրանց հաջորդող առաջին աշխատանքային օրվա համար:»,

3) ԷԲՑ կանոնների 141-րդ կետի 3.2-րդ ենթակետում «թույլատրելի հզորության» բառերից հետո լրացնել «կամ օրենքով սահմանված՝ ԻԷԱ-ի տեղակայանքների դրվածքային հզորության առավելագույն» բառերը,

4) ԷԲՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 236.1 կետով.

«236.1. Սպառողների էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելիությունից, կրում է Բաշխողը՝

1) բազմաբնակարան շենքի բնակիչների դեպքում՝ մինչև սպառողի բնակարանը,

2) բազմաբնակարան շենքի բնակիչ չհանդիսացող 0,22 կՎ լարմամբ սնվող սպառողների դեպքում՝ մինչև սպառողի շենքի, շինության կամ տարածքի կանգնակը կամ բաշխիչ վահանը,

3) 0,4 կՎ և բարձր լարմամբ սնվող սպառողների դեպքում՝ մինչև Հաշվառման քարտով կամ Պայմանագրով ամրագրված սահմանազատման կետը:»,

5) ԷԲՑ կանոնների 33-րդ գլխի վերնագրում «էլեկտրական էներգիայի» բառերից առաջ լրացնել «Բաշխողի» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան

___ _____ 2023թ.